

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Մովսես Վարդանյան

2. **ԶՔԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

«Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ-ՀԱԷԿ-ի տնօրեն

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

Ռուսաստանի Դաշնություն, քաղաք Մոսկվա, դեկտեմբերի 3-ից 7-ը, 2023թ.

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Ռուսաստանի Դաշնություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն 2023թ. դեկտեմբերի 4-ից 6-ը «Ռուսատոմ» Պետական կորպորացիայի կողմից կազմակերպված կադրերի պատրաստման հարցերով հայ-ռուսական համատեղ աշխատանքային խմբի 3-րդ խորհրդակցությանը (1-ին և 2-րդ տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետությունում, ՀԱԷԿ-ի տարածքում)

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Խորհրդակցությունների ժամանակ իմ և ռուսական կողմի ներկայացուցիչների հետ քննարկվել են հետևյալ հարցերը՝

- 1) Հայաստանի ուսանողների համար նպատակային ուսուցում՝ ըստ քվոտաների (կարգավիճակ, ընտրության արդյունքներ)
- 2) Միջբուհական համագործակցության զարգացում (համագործակցության կարգավիճակը և 2024/2025 թթ. ծրագրերը)
- 3) Միջին մասնագիտական կրթություն՝ 2024/2025 թթ. ծրագրեր
- 4) Լրացուցիչ մասնագիտական կրթություն և դասընթացներ ("Train the trainers"), որոնք հիմնված են «Ռուսատոմ» Տեխնիկական ակադեմիայի ԼՄԿ նպատակային ծրագրերի հիման վրա

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Խորհրդակցությունները և հանդիպումները տեղի են ունեցել «Ռուսատոմ»-ի Տեխնիկական ակադեմիայի Մոսկովյան մասնաճյուղում:

Երկօրյա հանդիպումների ընթացքում Վալերի Կարեզինի («Ռուսատոմ» ՊԿ, նախագծի տնօրեն) և Յուլիա Դմիտրիևայի («Ռուսատոմ» ՊԿ, նախագծի ավագ մենեջեր) հետ քննարկվել են ՀՀ ատոմային էներգետիկայի ոլորտում կադրերի պատրաստման հարցերով հայ-ռուսական համատեղ աշխատանքային խմբի ձեռք բերած պայմանավորվածությունների արդյունքում 2024/2025 թթ. ուսումնական տարվա համար ռուսական կողմից հատկացված ՌԴ ոլորտային բարձրագույն ուսումնական հաստատություններում անվճար հիմունքներով 20 դիմորդի տեղ՝ բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսումնական ծրագրերով սովորելու համար:

Յուրի Սելեզնևի («Ռոսատոմ» Տեխնիկական ակադեմիայի ռեկտոր) և Վիկտոր Մազեպովի («Ռոսատոմ» ՏԱ Մոսկովյան մասնաճյուղի կենտրոնի տնօրեն) հետ քննարկվեցին Հայկական ԱԷԿ-ի անձնակազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման հնարավորությունները, դասընթացների արժեքը, անցկացման վայրը և տևողությունը՝ ըստ ՀԱԷԿ-ի կարիքների:

Քննարկվել են նաև հեռավար ուսուցման հնարավորությունները, ինչպես նաև Նովովորոնեժի ԱԷԿ-ի ուսումնավարժական կենտրոնում Հայկական ԱԷԿ-ի օպերատիվ անձնակազմի որակավորման պահպանման դասընթացների կազմակերպումը:

«Ռոսատոմ» Տեխնիկական ակադեմիայի կողմից ներկայացվել են ուսումնական ծրագրերը, մասնագետների վերապատրաստման դասընթացների բովանդակությունը, տեխնիկական միջոցներով շահագործող և վերանորոգող անձնակազմի պատրաստման դասընթացները:

Քննարկման արդյունքում մեր կողմից առանձնացվել են առավել կարևորություն և հրատապություն ունեցող դասընթացների թեմաները՝ կոմերցիոն առաջարկ ստանալու համար:

Բանակցությունների միջոցով պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ անձնակազմի համար կկիրառվեն «Ռոսէներգոատոմ»-ի ներքին գները (դասընթացների համար), ինչպես նաև կտրամադրվեն որոշակի զեղչեր:

Կողմերի հետ քննարկել ենք միջին մասնագիտական կրթություն պահանջող բանվորական անձնակազմի պատրաստման հնարավորությունները ՌԴ պրոֆիլային ուսումնական հաստատություններում (եռակցողներ, արատորոշողներ, ռեակտորային և տուրբինային բաժանմունքների սարքավորումների վերանորոգման փականագործներ):

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Երկօրյա քննարկումների և բանակցությունների արդյունքում կազմվել և ստորագրվել է արձանագրություն (կադրերի պատրաստման հարցերով հայ-ռուսական համատեղ աշխատանքային խմբի 3-րդ խորհրդակցություն), որով հաստատվել են ձեռք բերված պայմանավորվածությունները և հետագա համագործակցության ուղղությունները:

Գործուղման վերջին օրը «Ռոսատոմ» Տեխնիկական ակադեմիայի կողմից մեզ ներկայացվեց իրենց կողմից մշակված դասընթացների ցանկը (անցկացման վայր, հնարավոր արժեք, մասնակիցների քանակ, անցկացման հնարավոր ժամկետներ):

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Քննարկումներն ու բանակցություններն ընթացել են առողջ և կառուցողական, բարենպաստ աշխատանքային մթնոլորտում, և բավականին արդյունավետ են եղել այցի նպատակին հասնելու տեսանկյունից:

Ելնելով ատոմային էներգետիկայի ոլորտում կադրերի պատրաստման կարևորությունից, ինչպես նաև երիտասարդ մասնագետներ պատրաստելու ՌԴ փորձից, գտնում եմ, որ տվյալ համագործակցությունը իր դրական ազդեցությունը կունենա առաջին հերթին գործող էներգաբլոկի անվտանգության բարձրացման հարցում, ինչպես նաև ՀՀ հետագա ատոմային նախագծերի համար:

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի
առաջին տեղակալ- ՀԱԷԿ-ի տնօրեն



Մ. Վարդանյան